ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

_______________ № _______________

Ձեր № ____________________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան

Ձեր 16.03.2015թ. N37/37.2/3909-15 գրությամբ ներկայացված ««Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Սելեկցիոն նվաճումների արտոնագրի հայտ ներկայացնելու, արտոնագիր ստանալու և այն գործողության մեջ պահելու, ինչպես նաև արտոնագրի հետ կապված այլ իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունները պայմանավորված են պետական մարմինների կողմից իրենց լիազորությունների շրջանակում համապատասխան գործողությունների կատարմամբ: Պետական մարմինների կողմից իրականացվող գործողությունների համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է գանձել պետական տուրք: Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով մտավոր սեփականության օբյեկտների (գյուտեր, օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ, ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ և այլն՝ բացառությամբ սելեկցիոն նվաճումների) իրավական պահպանության հետ կապված պետական մարմինների կողմից իրականացվող

գործողությունների համար նախատեսվում է գանձվել պետական տուրք, առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածով ներկայացված «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը և 20-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչելու և պետական տուրքի գանձման վերաբերյալ դրույթները դադարեցնելու փոխարեն՝ դրանք պահպանել և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում սելեկցիոն նվաճումների իրավական պահպանության հետ կապված պետական մարմինների կողմից իրականացվող համապատասխան գործողությունների համար սահմանել պետական տուրքի հստակ դրույքաչափեր:

Միաժամանակ, Ձեզ ենք ներկայացնում Նախագծի ընդունման կապակցությամբ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝ ПАВЕЛ

Հարգանքով՝ ՊԱՎԵԼ ՍԱՖԱՐՅԱՆ

Կատարող՝ Արտաշես Մաճկալյան
հեռ. (011) 800 232

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
««Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի կապակցությամբ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Վերոնշյալ օրենքի նախագծով նախատեսվում է՝

1) սելեկցիոն նվաճման հայտի նախնական փորձաքննության ժամկետը սահմանել մեկ ամիս՝ նախկին 3 ամսվա փոխարեն,

2) ուժը կորցրած ճանաչել սելեկցիոն նվաճման արտոնագրի հայտ ներկայացնելու, արտոնագիր ստանալու և դա գործողության մեջ պահելու, ինչպես նաև արտոնագրի հետ կապված այլ իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ կատարելու համար տուրքեր գանձելու մասին դրույթները,

3) սահմանել, որ սելեկցիոն նվաճման հայտը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ լիազորված մարմնի պաշտոնական կայքի միջոցով,

4) հստակեցնել կամ կրճատել սելեկցիոն նվաճման հայտի փորձաքննությունների ժամկետները,

5) սելեկցիոն նվաճումներին վերաբերող տեղեկությունները հրապարակել նաև լիազորված մարմնի պաշտոնական կայքում:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ վերոնշյալ նախագծի ընդունումը ՀՀ պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն: Իսկ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու և պետական տուրք սահմանելու դեպքում ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կունենա դրական ազդեցություն: